Dalma Garden Mall առևտրի կենտրոնում իրականացվող արշավի պայմաններ

1. Ներածություն

1.1 «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ի կողմից American Express վճարային գործարքները խթանող արշավ /այսուհետ՝ Արշավ/:

1.2 Արշավի կազմակերպիչ է հանդիսանում «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:

1.3 Կազմակերպչի մասնաճյուղերի կողմից տրամադրված հիմնական քարտերի քարտատերեր /այսուհետ՝ Քարտատեր/:

1.4 Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.5 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.acba.am կայքում:

2.2. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն կտեղադրվի Արշավի 2.1 կետում նշված հարթակում:

2.3. Արշավի շրջանակներում Պարգևատրումները սահմանվում են հարկումից հետո: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:

3. Մասնակցության պայմաններ

3.1. Dalma Garden Mall առևտրի կենտրոնում, սեպտեմբերի 28-ին և 29-ին, գործող առևտրի և սպասարկման կետերում (բացառությամբ սուպերմարկետների) American Express քարտերով վճարումներ իրականացնելու դեպքում Քարտատիրոջը կտրամադրվի կատարված վճարային գործարքի 10%-ի չափով հետվճարում՝ առավելագույնը 10,000 ՀՀ դրամ:

3.2. Արշավին կարող են մասնակցել կից և լրացուցիչ American Express քարտերի Քարտատերերը, սակայն կից և լրացուցիչ քարտերով կատարված Վճարային գործարքները գումարվելու են հիմնական քարտով կատարված Վճարային գործարքներին: Քարտատիրոջ տարբեր American Express քարտերով կատարված Վճարային գործարքները հաշվարկվելու են միասին:

3.3. Յուրաքանչյուր Քարտատիրոջը կարող է տրամադրվել 3.1 կետով սահմանված առավելագույնը մեկ հետվճարում:

3.4. Կազմակերպիչն իրավունք ունի Արշավի ընթացքում և Արշավի ամփոփման արդյունքում չպարգևատրել զեղծարարություն (կեղծ վճարումների սխեմա, այլ խարդախություն) իրականացրած Քարտատերերին:

3.5. Ընդ որում, 3.1 կետով սահմանված հետվճարումները կտրամադրվեն Արշավի ամփոփումից հետո մինչև 15/10/2019թ.-ը (ներառյալ):